անտի, և թէ՝ չէ օրէն սեփհականել զայն Լատինաց. դադարեցաւ շինութիւնն, և յետ աւուրց եկն հրաման՝ եւ եղեւ քննութիւն օրինօք Շէրիի, եւ ըստ հրամանի մեծի Եպարքոսին ընկերութեամբ շինեցաւ՝ ըստ առաջին դրից ոչ աւելի և ոչ նուազ, դնելով մէն մի վերակացու յերից վանաց, և զծախս շինութեան հաւասար բաժանեցաւ, և յետ այնր պատուէր եղեւ 'ի Դատաւորէն մնալ Այրին 'ի վիճակն առաջին. չլինել ուժեք սեփհական, այլ ընկերութեամբ երից ազգաց, եւ դուռ նորին մնալ բաց առանց փականաց. ՌՅԶՕ (1849). Բայց յանցանել ժամանակի եւ տարւոյ Լատինք տիրեցին բովանդակ Այրին շինութեամբ եւ նորոգութեամբ, ամրացուցին դրամբք և բանալեօք, և զարդարեցին եկեղեցական սպասուք։

Կիրակոս Պատրիարք՝ այր մեծահանճար, փառահեղ, պատկառելի և համեղ 'ի բանս և 'ի դրիչս, որոյ հանճարն փայլի 'ի բովանդակ նամականիս և յայլ գրուածս նորին. թէպէտ և հասեալ 'ի բարւոք ծերութիւն, այլ ոչ այնչափ յաղթահարեալ յալեւոյթ հասակէն, որքան բնաւորեալ 'ի նմա չարատանջ յախտէ, զոր կրէր 'ի ստամոքսի իւրում, կարծեցեալ ախտ թանչից, որ բազմիցս նեղէր և տագնապէր զնա, եւ 'ի վերջին նուազի առաւել ընկճեալ նուաճեցաւ 'ի բռնութենէ նորին և աւանդեաց յանկարծ զհոգին իւր առ Աստուած, ('ի 25 Մայիսի. 1850) 'ի հասակի 68 ամաց, վարեալ զիշխանութիւն Պատրիարքութեան ամս 3 և ամիսս իբր 4. և միաբանութիւնն շքեղութեամբ կատարեալ զոխսուր հանդէս յուղարկաւորութեան, անփութեցին զմարմին նորա 'ի գաւիթ եկեղեցւոյն Ս. Փրկչի 'ի կարգս Պատրիարքաց, յորոյ վերայ կանգնեցաւ յետոյ շերիմ փառաւոր։

Սա յետ ժամանելոյ 'ի Ս. Աթոռն յաւուրս Թէոդորոս Պատրիարքի, վաստակաւոր եղեւ արիութեամբ եւ խոհեմութեամբ 'ի զանազան պաշտօնս յօգուտ ազգին, որպէս յիշեցաք 'ի տեղիս տեղիս 'ի կարգի պատմութեանս, և 'ի վերջոյ վարեաց զՏեսչութիւն Ճեմարանին Իւսկիւտարու։ և անտի եկեալ Յերուսաղէմ զպաշտօն Փոխանորդութեան Զաքարիա Պատրիարքի, որ և եկաց յաջորդ նորին, և 'ի կենդանութեան իւրում ետ նորոգել զվանս Ս. Փրկչի՝